

# ՓԼՐԻՍԵՑԻՆ ՈՒ ՄԵԼՍԵՒՈՐԸ

---



*Հեղինակ՝*

ԷՐՄԵՍ ՌՈՆՔԻ

*Թարգմանեց՝*

ՄԱՆՏՈՅ ՎԱԿԷ ՂԱԶԱՐԵԱՆ

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

*Սիրելի Ընթերցող,*

*օգտագործելով հաղորդակցութեան ներկայ միջոցները, անձնական նախաձեռնութեամբ՝ փորձում եմ իմ համեստ նպատակները բերել մեր ազգային հոգեւոր կեանքին, նաեւ համացանցի միջոցով տարածելով քրիստոնէական փոքրիկ գրութիւններ, այսպիսով յաղթահարելով աշխարհագրական սահմանափակումներն ու առաքումի ժամանակները: Փափաքս է հաղորդել քեզ այն՝ ինչ ինձ հաղորդուեց Նախախնամութեան գծած զանազան ճանապարհներով:*

*Կարող ես քո մասնակցութիւնը բերել Աստուծոյ Խօսքին մատուցուած այս ծառայութեանը, հաղորդելով քո մերձաւոր ու հեռաւոր ծանօթներին ահա այս համացանցային հասցէն.*

[gradaran@mashtoz.org](mailto:gradaran@mashtoz.org)

*Այս հասցէին գրելով, նրանց հասցէները նոյնպէս կ'անցնեն իմ անուանացանկի մէջ եւ յաջորդաբար նրանք նոյնպէս կը ստանան հոգեւոր նոր գրութիւններ ի հրատարակումը տեղեկացնող նամակները: Այս ծառայութիւնն անվճար է:*

*Այս գործին որեւէ առաջարկ կամ օգնութիւն հասցնելու, որեւէ տեղեկութիւն խնդրելու կամ հարցումներ ներկայացնելու համար կարող ես գործածել համացանցային վերոնշեալ հասցէն:*

*Կանխայայտ շնորհակալութեամբ եւ լաւագոյն մաղթանքներով,  
եղբայրդ ի Քրիստոս Յիսուս՝*

*Մաշտոց Վահէ Ղապարեան*

# ՓԱՐԻՍԵՑԻՆ ՈՒ ՄԱՐԿԱՆՈՐԸ

«Այս առակն էլ պատմեց նրանց մասին, ովքեր իրենց մասին այն համարումն ունեն՝ թե արդար են, եւ արհամարհում են ուրիշներին:

Երկու հոգի տաճար գնացին աղօթելու: Նրանցից մէկը փարիսեցի էր, իսկ միւրը՝ մաքսաւոր: Փարիսեցին, մի կողմ կանգնած, աղօթում էր՝ ասելով.

”Աստուած իմ, շնորհակալ եմ Քեզնից, որ ես ուրիշ մարդկանց նման յափշտակող, անիրաւ, շնացող չեմ, եւ նման չեմ նաեւ ահա այս մաքսաւորին:

Այլ շաբաթը երկու օր պահեւ եւ անում եւ իմ ամբողջ եկամտաւի տասանորդը տալիս եմ տաճարին”:

Իսկ մաքսաւորը, տաճարի խորքում, չէր համարձակում աչքերը դէպի վեր բարձրացնել, ծեծում էր իր կուրծքը եւ ասում. ”Աստուած, ներիր ինձ՝ մեղաւորիս”:

Ասում եմ ձեզ, - եզրակացրեց Յիսուս, - մաքսաւորն է, որ արդարացած տուն գնաց եւ ո՛չ թէ փարիսեցին, որովհետեւ ով բարձրացնում է իր անձը՝ կը խոնարհուի, իսկ ով խոնարհեցնում է իր անձը՝ կը փառաւորուի»<sup>1</sup>:

*Կայ աղօթքի մասին մի առակ, որ սարսափ է ազդում:*

*Փարիսեցու եւ Մաքսաւորի առակը: Առաջին հայեացքից թւում է՝ թէ հանդարտեցնում է մեզ, բայց սա պարզապէս այն պատճառով – ինքնապաշտպանական ակամայ դիրքորոշմամբ – որ ինքներս մեզ տեսնում ենք մաքսաւորների եւ ոչ թէ փարիսեցիների շարքում:*

*Բայց այժմ թողնենք, որ այս խօսքերը ներգործեն եւ խոցեն մեր կեանքը:*

*Առա՛նց ինքներս մեզ «կանոնին համապատասխան» զգալու, առա՛նց ինքներս մեզ «արդարացուած մաքսաւորներ» նկատելու, որովհետեւ այս առակն ասուած է ճիշտ նրանց համար՝ ովքեր յաւանդում են արդար լինել:*

*Պարզապէս փոխարինել ենք արդարի կերպարը. մինչ Յիսուսի ժամանակ արդարի կերպարը նոյնանում էր փարիսեցու կերպարի հետ, մեր՝ այսօրուայ ընթերցողներին համար այն նոյնանում է ոչ – փարիսեցու կերպարի հետ: Փոխուել է պարզապէս տիպարը, որի մէջ ճանաչում ենք ինքներս մեզ, բայց ինքներս մեզ մշտապէս նկատում ենք արդարների շարքում:*

*Այս առակն ուսուցանում է մեզ, որ աղօթելը վտանգաւոր է, որովհետեւ աղօթողը ենթարկւում է հոգեւոր զանազան վտանգների. ուրիշներից ինքնակղզիացում, ինքնուրոյն կեղծ խղճի ձեւաւորում, Աստծոյ վերաբերեալ խաբկանքներ, հոգեւոր կեանքի վերաբերեալ սխալներ, մեղանշումներ:*

*Սա մի պատերազմական առակ է: Յիսուս յայտնում է, որ աղօթքը կարող է մեզ անջատել ու հեռացնել Աստծուց: Կարող է մեզ անաստուածների վերածել:*

*«Երկու մարդ Գաճար Բարձրացան աղօթելու»:* Նրանցից մէկը փարիսեցի էր, իսկ միւրը՝ մաքսաւոր: Փարիսեցին, ոտքերի վրայ ուղիղ կանգնած, աղօթում էր կարծես ինքն իրեն ուղղուած. «Ո՛վ Աստուած, երախտագէտ եմ Քո նկատմամբ, որովհետեւ ուրիշ մարդկանց նման չեմ՝ յափշտակող, անարդար, շնացող. եւ նման չեմ այդ մաքսաւորին»:

*Փարիսեցին, հրէական աղօթքի ուղղահայեաց կեցուածքով, աղօթում է կարծես ինքն իրեն ուղղուած: Արտասանում է յունարէն գրուած լեզու, «pròs heautón»: Խօսքերով դիմում է Աստծուն, բայց իր ամբողջ էութիւնն ուղղուած է դէպի իր իսկ անձը: Որպէս բանտարկեալը մի հայելու, որի մէջ հիանում է ինքն իրենով:*

<sup>1</sup> ՂԿՍ 18, 9-14

Արտասանում է, սակայն, ճշմարիտ խօսվեր. «Տեր, երախտագուշտ եմ՝ Բոնկարմամբ»:  
Աստուծոն երախտագուշտութիւնն մարտոցելը ձրիապարգեւ, անշահախնդիր,  
ազատասիրտ աղօթքի գագաթնակէտերից մէկն է:

Բայց փարիսեցու հոգում ներկայ է մի գալարում, ծռուածութիւն. չի  
կանգնում Աստծոյ առաջ, կանգնում է մարդկանց առաջ. «Երախտագուշտ եմ՝ Բո  
նկարմամբ, որովհետեւ նման չեմ որ շարդկանց»:

Փարիսեցու «ուղիղ կեցուածքով կանգնել»ը մարդու՝ ազատ եւ հասուն որդու  
կանգնելը չէ Աստծոյ ազատութեան դիմաց, հանդիպումը չէ երկու  
ազատութիւնների, որոնք փոխադարձաբար ազատագրում են միմեանց: Փարիսեցու  
«ուղիղ կեցուածքով կանգնել»ը խորհրդանշանն է աշխարհի դէմ, մարդկանց դէմ  
մղուած մրցակցութեան ու յաղթանակի, ընդհարումի ու յաջողութեան:

Փարիսեցին իր անձը համեմատութեան մէջ չի դնում Աստծոյ հետ,  
համեմատութեան մէջ է դնում մարդկանց հետ:

Աստծոյ դիմաց երբեք չպէտք է չափուենք ուրիշների համեմատ, այլ՝  
Աւետարանի: Երբե՛ք ու երբե՛ք ուրիշների արածն ու չարածը չէ, որ օրինաւոր կամ  
անօրինական է դարձնում իմ կեանքը:

Չպէտք է ապրեմ հայելացումի, անուղղակի մի կեանք:

Որովհետեւ ուրիշները սահմանում ու որոշում են նորաձեւութեանը  
համապատասխանող վարուելակերպերը, ո՛չ թէ աւետարանականները:

Ուրիշ մարդիկ ... յափշտակող, անարար, շնացող: Իմ առաքինութիւնները ինձ  
իրաւունք չեն տալիս դատելու ուրիշներին:

Կարելի չէ աղօթել եւ արհամարհել:

Կարելի չէ Եկեղեցում շարականներ երգել, իսկ դրսում քննադատել ու  
դատապարտել:

Փարիսեցին բացասական կարծիք ունի աշխարհի նկատմամբ. նրա կարծիքով,  
այնտեղ միայն պոռնիկներ ու գողեր են ապրում. նրան թւում է՝ թէ ապրում է  
խաբեբաներով ու այլասերուածներով շրջապատուած: Ինչպիսի՛ կեանք է իրենը,  
կասկածներով յագեցած: Որքա՛ն սարսափ տնից դուրս գալու: Ինչպիսի՛ տխուր եւ  
վտանգների ենթակայ կեանք, նենգ ու յափշտակող մարդկանց այս ամբոխում:  
Փարիսեցին աշխարհն ու իր յարաբերութիւնները տեսնում է որպէս գիշատիչների  
միջավայր, ուր մարդիկ նուիրուած են միայն գողութեան, սեռային այլասերումի,  
խաբէութեան: Թերեւս պարկեշտ է ու խղճամիտ, հաւաստիօրէն՝ ԳժԺԽԳ:

Կերպը՝ որով ընթերցում ես աշխարհն ու մարդիկ, ազդում եւ թերեւս որոշում  
է աղօթքիդ կերպը:

Ինչպէս նաեւ ասում է. «Շնորհակալեմ՝ որ չեմ»: Ահա հոգու ջլատումը. ո՛չ թէ  
գոյութեան, լինելութեան երգը, այն բանի՝ ինչը որ մէկը «է» բերկրանքով ու  
դրականութեամբ, այլ այն բանի՝ ինչը որ մէկը «չէ». բացասական սիրտը:  
Փարիսեցին աղօթում է մի հակա-Մեծացո՛ւցէ: Մեծացո՛ւցէն կազմուած է գեղեցիկ  
խօսքերով, դրական դատողութեամբ, հիացումով, գմայլանքով, Աստծոյ գործերով:  
Փարիսեցու պարագային կատարում է հակա-քրիստոնէական մի աղօթք, ուր  
Աստուած բացակայ է, իսկ արարչութիւնն ամբողջովին ա՛յլ որակաւորում է  
ստանում՝ քան «շաղ Բարի»ն:

Աղօթելու համար հարկաւոր է գրաւել Աստծոյ հայեացքը. «Եւ-դեոս-՝ որ ամէն  
Բան Բարի էր»<sup>2</sup>:

«Բարի մարդը իր սրտի Բարի Գանձից Բարի է դուրս Գանում: Չար մարդը իր շար Գանձից  
շարի է դուրս Գանում»<sup>3</sup>: Որովհետեւ «Բերանը սրտի լիութիւնից է խօսում»<sup>4</sup>:

Ապա խղճի քննութիւն է կատարում. «... շաբաթը երկու օր պաճ էմ անում,  
ամբողջ ունեցումս թէիցս քասանորդ եմ վճարում»:

<sup>2</sup> Ծնդ 1, 31  
<sup>3</sup> Մտթ 12, 35  
<sup>4</sup> Ղկս 6, 45

Եւ թուարկուածները բարի առաքինութիւններ են: Ուրեմն ինչո՞ւ է նրա աղօթքը մերժուած, ինչո՞ւ է չի հասնում երկինք: Մոռացել է խոստովանել ինչ որ մի յանցա՞նք:

Աւետարանի ներկայացրած պատմութիւնից սա չենք կարող ենթադրել: Ծածուկ յանցանքներ չունէր:

Ինչպէս նաեւ մաքսաւորը, աւելի լաւը չէր՝ քան ինչ ասում էր իր մասին. իսկապէս մեղաւոր էր:

Յիսուս մրցակից երկու բարոյականութիւնների հաշուեկշիռ չի ներկայացնում, այլ՝ երկու դիրքորոշումների. Աստծոյ հանդէպ եւ կեանքի հանդէպ:

Փարիսեցու աղօթքը չի հասնում Աստծուն, որովհետեւ իրականում ուղղուած է Աստծուն: Փարիսեցին գիտէ աղօթել, **Հմ-դ** է, տարիներով յաճախել է աղօթքի դպրոցը, «Shemà Israel»ի, տասնութ օրհնութիւնների փորձառութիւնը, քաջ գիտէ՝ որ իւրաքանչիւր աղօթք պէտք է սկսուի երախտագիտութեան մատուցմամբ, եւ այդպէս էլ վարւում է:

Թեքեւս պէտք է ասել՝ որ հպա՞րտ է, քանի որ շնորհակալութիւն է յայտնում խղճամիտ լինելու համար եւ Աստծուն ներկայացնում է իր կեանքի ընծան:

Չափազանց դիւրին կը լինէր, եւ տակաւին բարոյականութեան հողի վրայ կը գտնուէինք:

Իրականում, փարիսեցին – որ երբայցերէնում նշանակում է «անջատուած» – անջատուած է Աստծուց. աղօթքը նրա համար մենամարտ է հրեշտակի, այլ՝ միւս մարդկանց հետ. նա շարունակում է կրկնել, կարծես ինքն իրեն ուղղուած, այն բառը՝ որում բռնուած է ինչպէս թակարդում. **ես, ես, ես:**

Բոլոր բայերը, որ գործածում է, առաջին դէմքով են. **ե՞ս երախտագիտե՞մ, ե՞ս եմ, ե՞ս պահել եմ անո՞ւմ, ե՞ս վճարո՞ւմ եմ:**

Մոռացել է աշխարհի ամենակարեւոր բառը. **Դու:**

Աղօթել՝ նշանակում է «Դու»ով դիմել Աստծուն: «Հայր մեր»ը քրիստոնէական մեծ աղօթքն է, ուր երբեք չի ասոււմ «ես», ուր երբեք չի ասոււմ «իմ»:

Աստծոյ հետ խօսելիս, փարիսեցին իրականում խօսում է միայն իր մասին: Եւ այսպէս, անգիտակից կերպով, մերժում է Աստծուն: Փարիսեցին արդէն ամէն բան գիտէ, ծանօթ է Աստծոյ դատաստանին, ճանաչում է բարին ու չարը: Եւ չարը ուրիշներն են:

Աստծուց անջատուած, մարդկանցից անջատուած, պատմութիւնից անջատուած, Աստծոյ կարիքն այլեւս չունի, Աստծուց ստանալիք այլեւս ոչինչ չունի, ուրիշներից սովորելիք այլեւս ոչինչ չունի: Փարիսեցին պաշտում է իր սեփական սիրտը:

Մի մարդ, որ բաւական է ինքն իրեն, չի կարող աղօթել. **«Ո՞վ ջարտ-ի չէ...»:**

Տաճարում աղօթող փարիսեցու կերպարը մատնանշում է փարիսեցիութեան մեր փորձութիւնը, որ այն է՝ երբ կարծում ենք մեր ուժերով փրկուել. **ես աղօթում եմ, ես կանոնապահ եմ, ես ողորմութիւն եմ տալիս, ես պահում եմ ուխտերս, խորքում՝ Աստծոյ կարիքը չունեմ:**

Իրականում, փարիսեցին սկսում է անաստուած դառնալ: Իր Աստուածը ոչինչ չի անում, միայն գրանցում է: Իր Աստուածը դատարկ է, ոչնչի պիտանի: Մաքսաւորինը, մինչդեռ, Աստուած է՝ որ գործում է, որ մասնակցում է նրա կեանքին:

Ոչ ոք չի կարող ինքն իրեն արձակում տալ, մեղքերի ներում շնորհել, եւ ո՛չ իսկ Հայրապետը: Ուրիշի կարիքն ունի, կախակայում է սեփական անձի վերաբերեալ սեփական դատողութիւնը, խոստովանւում է աղքատ եւ փնտռում է հարստութիւն:

Այսպէս է տեղի ունենում Ապաշխարութեան Խորհրդի ժամանակ, երբ խոստովանւում եմ մի մարդու՝ քահանայի առաջ, որը վկան է՝ որի միջոցով կրկին հասնում է ինձ այն՝ ինչ արդէն գիտեմ, բայց որ կրկին երաշխաւորւում է ինձ ու

աւանդուում. աւետիսը՝ որ Աստուած փրկում է, ջնջելով պարտքերը, վերստին բացելով ապագան:

Միայն փարիսեցիին է ինքն իրեն արձակում տալիս:

Հայելու առջ ճիացող ինքնահաճ մէկն է, բիրտ, Աստուծոց հեռու, մարդկանցից հեռու: Ինքնահաճ մարդն Աստուծոց աւելի հեռու է՝ քան Կայէնը:

Մաքսաւորը, մինչդեռ, տաճարի խորքում կանգնած, կռնակը կորացրած, մարդ՝ որ գնահատում է իրեն որպէս մարդկութեան չոր փշրանք, աչքերն անգամ չի բարձրացնում դէպի երկինք, կ'ուզէր անհետանալ, կուրծքն է ծեծում ասելով. «Ո՛վ Տէր, «շրբներ ինչ՝ մեղաւոր»»: Կենտրոնում դնում է ողորմութիւնը: Այն դնում է նաեւ նախադասութեան կենտրոնում:

Մաքսաւորն աղօթում է՝ որովհետեւ կարիք ունի, ուզում է ծնուել, ինչ որ մի բան ունի Աստուծոց ստանալիք. եւ ամէն ինչից աւելի՝ որովհետեւ գիտէ, ընդունակ է արտասանելու աղօթքի կենտրոնական բառը. Դու: «Դու, Ո՛վ Տէր, «շրբներ»»:

Ի տարբերութիւն փարիսեցու, մաքսաւորն իր աղօթքի կենտրոնական բայը վերաբերում է Աստուծուն:

Յայնժամ «ես»ը եւ «դու»ն մտնում են հաղորդակցութեան մէջ, ինչ որ մի բան է անցնում տաճարի խորքի եւ երկնքի խորքի միջեւ:

Փարիսեցին ասում է «ես». զգում է իրեն գործող ենթակայ:

Մաքսաւորն ասում է «ինձ». զգում է իրեն սիրոյ առարկայ:

«Ես»ից՝ «Դու»ի:

Մենախօսութիւնից՝ երկխօսութեան:

Աստուած փարիսեցու համար մի համր մակերես է, որի վրայ ցատկոտել է տալիս իր գոհունակութիւնը: Փարիսեցին, խորքում, աղօթում է ինքն իրեն: Միշտ այս «ես»ը, այս մենախօսութիւնը, ուր տիեզերքի կենտրոնը, ձգողական բեւեռը մոգական ու կախարդուած երկու տառեր են. «ես»: Փարիսեցու գործերն ու առաքիչութիւնները պատուանդանն են մի յուշարձանի, որ կանգնեցրել է իր փառքին:

Մաքսաւորն ասում է. «Տէր, Դու՝ «շրբներ»»:

Այն է՝ ինչ մեզ ուսուցանում է «Հայր մեր» աղօթքը. Դու՝ որ երկնքում ես, Քրիստոսն, Քրիստոսն, Դու՝ կամքը, Դու՝ ներքի մեզ, Դու՝ ազատիր մեզ:

Աղօթել՝ նշանակում է «Դու»ով դիմել Աստուծուն:

Աղօթել՝ նշանակում է դարձի գալ մենախօսութիւնից երկխօսութեան:

Ինքնահաճ մարդն Աստուծոց թերեւս աւելի հեռու է՝ քան Կայէնը:

Կայէնը քաւում է, թերեւս կարող է զղջալ, Աստուած ուղղակի պաշտպանում է նրա կեանքը<sup>5</sup>:

Ինքնահաճը, մինչդեռ, անգեղջ է ու անուղղայ:

Միակ անգեղջներն ու անուղղաները նրանք են՝ ովքեր ընդունակ չեն իրենց անձերից դուրս գալու:

Կրօնի կենտրոնում այն չէ՝ ինչ ես եմ անում, այլ այն՝ ինչ անում է Աստուած: Կենտրոնում իմ բարոյականութիւնը կամ իմ անբարոյականութիւնը չէ. կենտրոնում Աստուծոյ գործն է՝ որ փրկում է, ընդունում, կրկին կեանք պարգեւում:

Աստուծոն չենք արժանանում, Աստուծոն ընդունում ենք: Փրկութիւնն այն է՝ որ Նա սիրի, ոչ թէ՝ որ ես սիրեմ:

Աղօթքը առարկաներ ստանալու համար չէ, այլ՝ փոխուելու: Փարիսեցին չի կամենում փոխուել, թուարկում է բարի գործերը՝ որ կատարել է, աչքի է անցկացնում դրանք, հաշուեկշռի է ենթարկում անցեալը:

Մաքսաւորը, մինչդեռ, չի ընթանում նոյն ճանապարհով, ինչպէս կարող էինք սպասել, չի թուարկում զանց առած առաքիչութիւնները: Պարզապէս խօսում է իր մասին. ես մեղաւոր եմ:

Կայ աղօթելու մի առաջին ձեւ, որ է՝ ներկայացնել ինձ վերաբերուող իրականութիւնները:

<sup>5</sup> Հմմտ. Ծնդ 4, 15

Կայ աղօթելու մի երկրորդ ձեւ, որ է՝ ջանալ յարաբերութեան մէջ լինել, ստեղծել ես—դու հաղորդակցութիւնը:

Հիմնական կարեւորութիւն ունի սեփական անձի մասին չխօսելը, այլ՝ յարաբերութիւն ձեւացնելը:

Աղօթքն իր տեղը գտնում է յայտաբանութեան մարզում, ո՛չ թէ վարդապետական մեկնաբանութեան. աղօթքը բարոյականութեան մանրակրկիտ տեղեկագիր է, ո՛չ էլ խօսքերի բազմապատկում. աղօթքը աշխատանքն է իմ անձը այնպիսի դիրքի ու կեցուածքի մէջ դնելու՝ որ հանդիպումը կարողանայ տեղի ունենալ:

Ամբողջ Սաղմոսարանը սա է փնտռում. ինչպէ՞ս մերձենամ Եահոնէին, ինչպէ՞ս տեսնեմ իր Դէմքը:

Աղօթել՝ նշանակում է ուխտագնացութեան մեկնել:

Հեռու չլինելու համար Աստծուց, հեռու չլինելու համար մարդկանցից: Վերադարձ դէպի տուն: Ուխտագնացութիւն դէպի սրտի վայրը:

Իսկ մաքսաւորը, մարդկութեան այս չոր փշրանքը, որ չի համարձակում հայեացքը վեր բարձրացնել, ներում է:

Ո՛չ որովհետեւ փարիսեցուց աւելի լաւն է, աւելի բարի, աւելի առաքինի: Աւելի լաւը է: Իմաստ անգամ չունի այս համեմատութիւնը. լաւագոյն—վատթար:

Կարծել՝ թէ մաքսաւորը ներում է որովհետեւ փարիսեցուց աւելի առաքինի է, նշանակում է կրկնել փարիսեցու միեւնոյն սխալը: Սխալն, այսինքն, կարծելու՝ թէ հնարաւոր է արժանանալ Աստծուն:

Այդպիսի դէպքում բաւական կը լինէր պարզապէս սահմանել նոր դատանիչներ եւ հաստատել նոր դասակարգումներ:

Խոնարհութիւնն անգամ չի արդարացնում:

Ո՛չ, մաքսաւորը փարիսեցուց աւելի լաւը է:

Մաքսաւորը ներում է ստանում, որովհետեւ ասում է «Դու»:

Եւ բացում է, ինչպէս արեւի առաջ բացուող դուռ, ինչպէս ջրերի առաջ բացուող ամբարտակ, եւ Աստուած գալիս է:

Ներում է ստանում, որովհետեւ ապաւինում է Աստծուն, որովհետեւ դիմում է մի Աստծոյ, որ աւելի մեծ է՝ քան իր մեղքը, աւելի մեծ է՝ քան իր սիրտը:

Աստծուն՝ որ արեւ ու անձրեւ է պարգեւում արդարներին ու մեղաւորներին, Աստծուն՝ որ սիրում է մեղաւորին, Աստծուն՝ որ սեղանակից էր մաքսաւորներին ու պոռնիկներին, Աստծուն՝ որ իր ողորմութիւնը բաշխում է առանց սահմանափակումների<sup>6</sup>:

Աստծուն չենք արժանանում, Աստծուն ընդունում ենք:

Ճանապարհ ընկնենք, մեկնելով մեր անձնական ճշմարտութիւնից. բոլորս էլ մի քիչ փարիսեցի ենք, մի քիչ էլ մաքսաւոր:

Քանի՛ անգամներ եմ ես այսպէս աղօթել. «Տէր, այնքան էլ վատը չեմ: Ոտքերս Քրիստոսի հետքերին դնելու փորձեր՝ կատարել եմ: Բարի կամքը երբեք չի պակասել ինձնում, ընդհանուր առմամբ: Ինչ որ մի կերպ տարբեր եմ, աւելի լաւն եմ այն մէկից՝ ում ես գիտեմ, ում Դու գիտես: Կարծում եմ՝ որ բաւարար գնահատականի գէթ արժանացել եմ: Ուզո՞ւմ ես, որ այսպէս շարունակենք»:

Մի հասարակ գեղջերի ձգտում, մինչդեռ պէտք է խորը հառաչէի եւ դէպի վեր առաքէի ազատասիրտ խօսքեր, այսպէս արտայայտուող.

Տէր կեանքի,

քրիստոնէայ լինելը դժուար է:

Չեմ դիմանում, որոշ չափից աւելի չեմ կարողանում,

բայց կը ջանամ կրկին ոտքի կանգնեցնել

այն կոխկրտուած ծաղիկները, որոնց Դու ճանաչում ես:

Բայց Դու մօտեցրու Աջդ,

որ երբեք չես դադարել դէպի ինձ երկարել,

<sup>6</sup> Մտթ 5, 45

մօտեցրու Աջո դեռ մի փոքր,  
եւ ապա կ'ընթանանք ցերեկուայ մէջ  
ու գիշերուայ,  
վերջապէս կ'ընթանանք  
կեանքի դաշտերով: Ամէն:

## ՄԷԿ ա՛յլ վերջաւորութիւն

Իսկ եթէ փորձենք երջանիկ աւարտ տալ առակին: Կարելի կը լինէր գրել. «Յայնժամ փարիսեցիին, լսելով այդ խօսքերը, դողով բռնուած զգաց իրեն եւ ասաց, հայեացքը գետին խոնարհելով. ”Տէր, ողորմիր ինձ՝ փարիսեցուս, որ այլեւս ընդունակ չեմ հայելու դէպի Քեզ, դէպի եղբայրները: Տէր, հեռացրու աչքիս միջի գերանը, կոտորիր այս հայելին՝ որ շարունակ առջեւ է. ե՛կ բնակուելու միայնութիւնիցս ներս, պարգեւի՛ր ինձ տեսնել նրանց՝ ովքեր բախում են իմ կեանքի դռները, ովքեր ջանում են վերսկսել սիրել”»: Այս խօսքերից յետոյ, փարիսեցիին շրջուեց եւ իջաւ մինչեւ տաճարի խորքը, մաքսաւորի կողքին, կիսելու նրա լուրթիւնն ու նրա աղօթքը»:

Աղօթքի արդիւնքներից մէկն է նաեւ կրճատուած հեռաւորութիւնը փարիսեցու եւ մաքսաւորի միջեւ, նուաճուած՝ որպէս կերպարանափոխութիւն, որպէս Աստծուն եւ մարդկանց տեսնելու սեփական կերպի ձեւափոխում, որպէս վերստին ձեռքբերում այն անթուելի «Դու»ի՝ որով բնակեցուած են երկինքն ու երկիրը:

Աղօթքի ուղեգիրձը ուխտագնացութիւն է, աշխարհի ընդունումն է սեփական անձից ներս եւ յառաջանալը, բոլորի հետ, դէպի Աստուած:

Որովհետեւ կերպը՝ որով մարդ վարուում է մարդու հետ, հասնում է Աստծուն:

Իսկ կերպը՝ որով մարդ վարուում է Աստծոյ հետ, հասնում է մարդուն, պատմութեանը:

Հետեւաբար, հարցը հասնում է դե՛ռ աւելի հեռուն. ինչպիսի՞ Աստուած ենք մեր առջեւ պատկերացնում, երբ աղօթում ենք: Աստծոյ ինչպիսի՞ պատկեր են այսօր ներկայացնում մեր հաւաքները: Ամենաանյապաղ գործն այսօր Աստծոյ սրբապատկերի վերագծագրումն է: Երիտասարդ Աստծոյ, սիրահարուած, մարդուն սպասարկող, որ սրբիչը ձեռքն է վերցնում եւ կը կամենար լոյսի երիզներով կապել ու փաթաթել երկրի վէրքերը, ուշադիր, աստուածային հոգատար քաղցրութիւն, հանդիպումների աղբիւր, յարաբերութիւնների զօրութիւն:

Պրուդհոնն ասում է սարսափելի խօսքեր. «Դադարեցի հաւատալ Աստծուն այն օրը, երբ հանդիպեցի Նրանից աւելի բարի մարդու»:

Ծիշտ է, հաւատացեալներին երբեմն ներկայացւում է մի Աստուած, որ չի հետաքրքրում, անարիւն կամ օրէնքների ցասումնալի պաշտպան, որ ծիծաղում է մարդկային վշտակրութեան վրայ:

Սխալուողներին, անկանոն իրավիճակներ ապրողներին մօտենալ արգելքի, դատաստանի, օրէնքների բառապաշարով, անհեթեթութիւն է եւ իմաստազուրկ, թերեւս նաեւ ոճրագործութիւն: Նշանակում է երկար ժամանակով նրանց հեռու պահել Եկեղեցուց: Պարտաւոր ենք զգացնել յաւիտենութիւնը, որ արդէն իսկ աւետարանում է ապրելու քաղցրութեան մէջ:

Գործի դնել սէրը որպէս աւետարանումի ու քարոզչութեան գերադասեալ վայր:

Զգացնել՝ որ մեղքը դա կեանքի հրաշքի մոռացութեան մատնումն է:

Կեանքի մեր մասը պարտաւոր ենք նուիրել ու ընծայել, որքան կարող ենք, այն բանին՝ որ միակ արժէքաւորն է, այն բանին՝ որ յաւիտենական է մարդու մէջ: Յաւիտենական կեանքի արհեստաւորներ ենք: Իսկ այն՝ ինչ տեւում է ընդմիշտ,

միայն մէկ բան է. սէրը: Հաւատքը հասնելու է իր աւարտին, բայց սէրը լինելու է ընդմիջտ<sup>7</sup>:

Սա՛ է յաւիտենականութիւնն այստեղ եւ այժմ, երբ գալիս է մեր մէջ որպէս ահնաբուխ ջուր, որպէս կեանքի արիւն, որպէս աստուածային զօրութեան շունչ, որպէս աստուածային քաղցրութիւն:

## Ամբաստանութեան մտախարութիւնը

Փարիսեցու եւ մաքսաւորի առակը մեզ ուսուցանում է, որ աղօթքը կեանքի ու մահուան արկածախնդրութիւն է: Աղօթքը ճակատամարտ է. եթէ աղօթողը փորձում է նուաճել ու տիրել Աստծուն, քաշել Նրան դէպի ինքը, կորցնում է Աստծուն եւ իր սեփական մարդկութիւնը: Մինչդեռ մարդն ինքն է, որ պէտք է իր անձը մատուցի մարդկանց ներխուժմանն ու Աստծոյ ներխուժմանը: «Պարիսեցիքն ու Կարիսեցիքն ինքն ինքն էր, որպէս ինքն ինքն էր»<sup>8</sup>:

Այս դէպքում է միայն, որ իր կեանքը աղօթքից դուրս է գալիս բազմապատկուած:

Ի՞նչն է, որ ամէն բան կեղծ է դարձնում փարիսեցու աղօթքում:

Մարդն Աստծոյ առջ որպէս մեղաւոր է ամբաստանում մի ուրիշ մարդու, որն իրեն ոչ մի չարիք չի արել:

Մաքսաւորը, մինչդեռ, եւ ոչ իսկ նկատում է փարիսեցու ներկայութիւնը եւ սեփական մեղքերի մասին է միայն մտածում:

Փարիսեցին մեղաւորի պիտակ է բաժանում: Իսկ սա միայն Աստուած կարող է անել: Մենք երբեք չենք կարող որպէս մեղաւոր որակաւորել ուրիշներին: «Մեղաւոր» բառը յարմար է միմիայն մեր սեփական անձի համար: Այլապէս ինքներս մեզ դնում ենք Աստծոյ տեղը, ինչպէս նախածնողները մարդկութեան պատմութեան սկզբում:

Բայց Աստուած ինքն անգամ չի դատում. ընդունում է, սփոփում, տօն կազմակերպում:

Եահոնէին Նրա որդիներից մէկին մատնացոյց անելու փոխարէն, փարիսեցին մատնացոյց է անում մի յանցաւոր, իսկ իրեն՝ որպէս արդարացած: Նրա կարծիքով, ամբողջ աշխարհը բեմահարթակն է մի դատարանի, ուր փնտռում է մի յանցաւոր, մի համատարած չարիք: Այդ բեմահարթակի վրայ, չարիքը միշտ ուրիշների մօտ է: Քանի՛ քանի՛ մարդիկ են արբենում ուրիշների թերութիւններով: Քանի՛ քանի՛նք են կարծում աւելի բարձր թուալ՝ ուրիշներին դէպի վար մղելով:

Յիսուս միայն մէկ տեսակի մարդկանց չի հանդուրժում. ամբաստանողներին, մեղադրողներին:

Յայտնութեան գրքում, սատանայի անունը Չարախօս է. «Նա՛ որ մեր Աստծոյ առաջ օր ու գիշեր չարախօսում էր մեր դէմ»<sup>9</sup>: Սուրբ Հոգու անունն է Մխիթարիչ, դատապաշտպան:

Որտեղի՞ց է ծագում մեղադրելու այս մոլութիւնը, դատապարտելու այս կարիքը: Ծագում է վախից ու անապահովութիւնից: Ամբաստանողները վախենում են՝ թէ ամէն բան կը խորտակուի, որովհետեւ անապահով են հոգեմտաւոր աշխարհում, որովհետեւ իրենց ներսում զգում են մահը եւ ո՛չ թէ արեւը:

Փարիսեցիները տանջւում են, տազնապի ու անձկութեան մատնուած: Արդարամիտները միշտ տանջահար են:

<sup>7</sup> Հմմտ. 1Կր 13, 8

<sup>8</sup> Յվհ 21, 18

<sup>9</sup> Յյտ 12, 10

## Խոնարհութեան մտախաբուծիւնը

Սաղմոսներում սաղմոսերգուն շատ յաճախ է հռչակում իր անմեղութիւնը. «Իմ անմեղութիւնը վկայում է ինձ»<sup>10</sup>, «Որովհետեւ երբեք չեմ սայթափել»<sup>11</sup>:

Մենք Աստծոյ առաջ շատ հազուադէպ ենք հաստատում մեր անմեղութիւնը: Արդարութեան այդ հաստատումները մեզ չեն հրապուրում, այլ անհանգստացնում են: Արժէքաւոր ցուցմունք է, բայց ի՞նչ բանի: Թերեւս սաղմոսերգուից աւելի՞ խոնարհ ենք:

Մենք գայթակղւում ենք, լսելով՝ որ մի մարդ հռչակում է իրեն արդար, առանց սակայն մենք իրենից աւելի խոնարհ լինելու: Մենք պատրաստ ենք մեզ մեղաւոր խոստովանելու, բայց յաճախ սա պարզապէս մի զարտուղի միջոց է՝ առաքինութիւն ու արժանիք հաստատելու: Կանոնաւոր վիճակում ենք, որովհետեւ մեզ մեղաւոր ենք հռչակում: Մենք մեր սրտում ծածուկ կերպով սնուցում ենք մի փարիսեցի, որ հաստատում է արժանիքներն այլեւս ո՛չ թէ ծոմապահութեան, տասանորդների ու խղճմտութեան, այլ՝ խոնարհութեան: Բայց Աստծուն չենք արժանանում, այլ՝ ընդունում:

Հարկաւոր է աղօթել ճշմարտութեան դատարանի առաջ: Սաղմոսերգունները հռչակում են իրենց մեղաւոր է՝ արդար: Ճշմարտութեամբ ասել կարողանալու համար «այս հարցում կամ գործում սխալուել եմ», հարկաւոր է ճշմարտութեամբ ասել կարողանալ «այս հարցում կամ գործում ճիշտ եմ վարուել»:

Սաղմոսների դասն է սա, եւ առաջնորդում է մեզ մինչեւ հեռունները, եթէ սովորեցնում է մեզ կշռադատութեամբ հայել մեր մէջ, դրական հայեացքով նրա՝ ով ունի բարին տեսնելու խոնարհութիւնը:

Խղճի իրական քննութիւնը բացայայտելն է մեզնում կեանքի բոլոր սերմերը՝ որ Արարչի կենսալի ձեռքը շարունակում է սերմանել, ամբողջ բարի ցորենը՝ որ Աստծոյ անխոնջ արեւը տանում է հասունացման մեղնում, քաղցրութեամբ ու տոկուն յարատեւութեամբ:



<sup>10</sup> Սղմ 7, 9

<sup>11</sup> Սղմ 17, 5